Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիա համայնքի
ավագանու 2018 թվականի
մարտի 26-ի թիվ 17-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ) ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԱՅԼ ՏԱՐՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ներդաշնակ ճարտարապետական տեսքն ապահովելու նպատակով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի մայիսի 30-ի N01/29.6/[407365]-17 հանձնարարականի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, ուղղված Հայաստանի Հանրապետության բնակավայրերում շենքերի, շինությունների տանիքների ու արտաքին այլ տարրերի միասնական ճարտարապետական տեսքն ապահովելու ուղղությամբ: Մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 1275-Ն որոշմամբ հաստատվել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի կողմից կառուցապատողներին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի (ՃՀԱ) ձևաթղթում լրացումները, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարը ճարտարապետահատակագծային առաջադրանքում պետք է նշի նախատեսվող կառույցի տանիքներին, ճակատներին և արտաքին այլ տարրերին ներկայացվող ճարտարապետական պահանջները, այդ թվում նաև գունային սահմանափակումները:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի տարածքում որպես շինարարական նյութ արտաքին պատերի շարվածքների, երեսապատման, դեկորատիվ և այլ տարրերի համար հիմնականում կիրառվում են Հայաստանի տարածքում արդյունահանվող քարի տարբեր տեսակները (տուֆ, ֆելզիտային տուֆ, անդեզիտ, տրավերտին, մարմար, բազալտ, գրանիտ և այլն): Դրանով են պայմանավորված շենքերի ճակատների գունային

լուծումները, քանի որ բնական քարի շարվածքը, ինչպես և բնական քարով երեսապատումը լրացուցիչ մշակումներ (սվաղ, ներկում) չեն պահանջում: Միաժամանակ շենքի ճակատների գույնը որոշիչ դեր պետք է ունենա տանիքի նյութը և գույնը որոշելու համար, ընդ որում, դեպքերի մեծամասնությունում, տանիքի գույնը գերադասելի է ընտրել պատից մուգ երանգների միջև: Բացառություն կարելի է համարել բնական կղմինդրե տանիքը, որը համահունչ է դիտվում և մուգ և բաց պատերի հետ:

Ճակատների, պատուհանների շրջանակների, դռների, պատշգամբների և տանիքների գունային լուծումները պետք է ներդաշնակ լինեն մեկը մյուսին և շրջակա միջավայրի բնական գունակազմությանը: Շենքերի հիմնական տարրերը գերադասելի է լուծել մեղմ գույներով՝ օգտագործելով օխրայի, վարդագույնի, կարմրաշագանակագույնի, մոխրագույնի և դարչնագույնի բոլոր երանգները: Որոշ դեպքերում՝ կոնտրաստային շեշտեր ստեղծելու նպատակով հնարավոր է նաև արհեստական վառ գույների կիրառումը՝ ժամանակավոր կառույցների, բարեկարգման առանձին տարրերի՝ նստարանների, աղբամանների, գովազդային վահանակների և այլ տարրերի համար:

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՊՆԱԿ

Արթիկի տուֆ	Անիի տուֆ	Երևանի, Գյումրիի տուֆ	Գեղաքարի տուֆ	Մեծավանի տուֆ	Ձորագետի տուֆ	
վարդագույն	դեղին	սև, կարմիր	բաց վարդագույն, մարմնագույն	մուգ վարդագույն, կարմրավուն, մարմնագույն, դեղնավուն	աղյուսագույն, կարմրավուն	
229-184-183	244-176-131	74-68-42	242-219-218	221-131-131	241-153-93	
217-149-148	239-151-91	64-58-62	237-205-203	208-84-84	186-73-28	
	200-148-0	196-89-17	251-228-213	247-202-172	163-64-25	
		182-66-2		238-176-0		
Բազալտ	**Ֆելզիտ**	**Տրավերտին**	**Մարմար**	**Գրանիտ**	**Բետոն**	

191-191-191	225-251-247	255-246-225	235-245-255	213-220-228	201-201-201
174-170-170	255-242-204	202-140-16	245-255-235	172-185-202	123-123-123
118-113-113				50-62-79	82-82-82
				173-61-80	
				53-97-95	

ՏԱՆԻՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՊՆԱԿ

Շինանյութ		Բնական և արհեստական կղմինդր , մետաղե թիթեղ, պրոֆիլ, պրոֆնաստիլ , այլ					
Գունային ներկապնակ							
ՀՀ մարզ							
Տարածաշրջան							
Քաղաք							
1. ՇԻՐԱԿ							
Տարածաշրջանները	RGB RAL	196-89-17 2004	211-93-81 2012	148-54-52 3001	99-36-35 3013	53-69-57 6006	52-47-36 6022	50-62-79 5011
Ամասիա	RGB RAL	196-89-17 2004			99-36-35 3013	53-69-57 6006	